ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. օգոստոսի 5-ից 18-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (ք. Հայկոու) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԻՆՔ**
   Աստղիկ Հովհաննիսյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի և ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության քաղաքականության մշակման բաժնի գլխավոր մասնագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, ք. Հայկոու օգոստոսի 5-18-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   ՉԺՀ Հայնան նահանգի առևտրի դեպարտամենտի միջազգային համագործակցության և փոխանակման կենտրոն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**
   Մասնակցել «Ազատ առևտրի նավահանգստի համապարփակ մաքսային գոտի» խորագրով դասընթացին, որի նպատակն էր ներկայացնել Չինաստանի փորձը համապարփակ մաքսային գոտիների (Comprehensive Bonded Zones - CBZ) ստեղծման, զարգացման և կառավարման ոլորտում, ինչպես նաև համադրել այն ազատ առևտրի նավահանգստի մոդելի հետ:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Դասընթացի շրջանակում քննարկվեցին հետևյալ հիմնական ուղղությունները.
   - Հայնանի ազատ առևտրի նավահանգստի օրենքը՝ կառուցվածքը, նպատակները և նորարարական մոտեցումները մաքսային պարզեցման ու ներդրումային քաղաքականության մեջ
   - Ազատ առևտրի նավահանգստի համապարփակ մաքսային գոտիների դիրքը և զարգացման պատմությունը, ինչպես նաև դրանց դերը Չինաստանի երկկողմ շրջանառության (dual circulation) տնտեսական ռազմավարության շրջանակում
   - Մաքսային վերահսկողության քաղաքականություններ և մաքսազերծման մոդելներ, որոնք կիրառվում են CBZ-ներում՝ ներմուծման/արտահանման գործընթացների արագացման և պարզեցման նպատակով

Сканировано с CamScanner

- Խաչաձև սահմանային էլեկտրոնային առևտրի (Cross-border E-Commerce) մոդելները՝ ներառյալ bonded warehouse մոդելը և ուղղակի գնումների համակարգերը
- Ներդրումների խթանման և բրենդավորման մեխանիզմներ CBZ-ի համար
- Հարկային արտոնություններ, հարկի վերադարձման և հարկային նորարարության գործնական օրինակներ

Այցեր կազմակերպվեցին Չինաստանի Շանհայ, Սուչժոու, Սանյա և Քյոնգհայ քաղաքներ: Ծանոթացման նպատակով կազմակերպվել են շրջայցեր նաև Հայնան նահանգի մաքսային գոտիներ, ազատ առևտրի գոտիներ և սեմինարի թեմային սերտորեն առնչվող այլ վայրեր:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Դասընթացի ընթացքում մասնակիցների համար կազմակերպվել էին մի շարք բանախոսություններ, սեմինարներ և այցելություններ՝ ուղղված Չինաստանի «Ազատ առևտրի նավահանգստի համապարփակ մաքսային գոտիների» կառուցվածքի, կիրառվող մեխանիզմների և հաջողված փորձերի քննարկմանը: Դասախոսություններով հանդես եկան Հայնանի համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մի շարք ներկայացուցիչներ՝ ներկայացնելով Հայնանի ազատ առևտրի նավահանգստի ռազմավարական զարգացման ուղին, ներգրավված քաղաքականություններն ու կիրառվող օրենսդրությունը:

Մասնակիցներն այցելեցին ինչպես Հայնանի, այնպես էլ Շանհայի և Սուչժոյի համապարփակ մաքսային գոտիներ՝ տեղում ծանոթանալով կազմակերպված աշխատանքին, ներդրումային միջավայրի կառավարման մոդելներին և արդյունաբերական ծրագրերի զարգացման փորձերին: Տեղում կազմակերպվեցին նաև կլոր սեղան-քննարկումներ՝ չինական կողմի ոլորտային ներկայացուցիչների հետ: Այդ քննարկումների ընթացքում մասնակիցներն հնարավորություն ունեցան բարձրաձայնելու իրենց երկրներին առնչվող ոլորտային հարցերը և հետաքրքրվել համապարփակ մաքսային գոտիների մոդելների հնարավոր կիրառությամբ իրենց ազգային համատեքստում:

8. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

Ա. Հովհաննիսյան

25 օգոստոսի 2025թ.

Сканировано с CamScanner